Մնացական Խաչատրյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ
(Ռազմաքաղաքական տեսանկյուն)

Բանալի բառեր - Հայոց ցեղասպանություն, հատուցում, ապագայապլանավորող փաստաթուղթ, ռազմական քաղաքականություն, ռազմական ուժ, ազգային գաղափարախոսություն, Գարեգին Նժդեհ, ռազմաքաղաքական պատմություն, տարածք, Միացյալ Հայաստան:

«Քաղաքականութեան մէջ պարտուում, ձախողում են այն ժողովուրդները, որոնք չունեն որոշ և յստակ նպատակ, կամ երբ ունեցածը խստօրէն ազգային չէ»[1]*:*

Գարեգին Նժդեհ

Սույն հոդվածի իմաստը անցյալի պատմական իմաստավորման հիման վրա հայ ազգի համար որոշակի և հստակ նպատակի ու դրան հասնելու ուղիների որոնումն է կամ դրա փորձը: Ընդ որում, այդ նպատակը, անշուշտ, կապված է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման, Եղեռնի կրկնության բացառման և խստորեն ազգային նպատակադրմամբ **հայության հետագա ուղիները գտնելու, այլևս օտար ուժերի դավերին զոհ չգնալու երաշխավորման քաղաքականությունը մշակելու հետ:**

Անտարակույս, որևէ ազգ չի կարող ազգային քաղաքականություն վարել առանց սեփական ազգային գաղափարախոսություն ունենալու, քանզի ցանկացած քաղաքականության միջուկը գաղափարախոսությունն է: Հայ ազգի և հայկական պետականության հետագա քաղաքականության «խստորեն» ազգայնացումն անհնար է առանց մեր ազգային-պետական քաղաքական «զինանոցի» մեջ զուտ ազգային գաղափարախոսության՝ տվյալ դեպքում նժդեհյան ցեղակրոնության-տարոնականության կամ դրա հիմքի վրա ստեղծված հայաշունչ և հայակենտրոն գաղափարախոսության ներմուծման: Առավել ևս, որ թե՛ տարածաշրջանային, թե՛ համաշխարհային հեգեմոնիայի ձգտող բոլոր ազգերն ու պետությունները սեփական շահերն հետապնդելիս «ի զեն են վերցրել» խստորեն ազգային գաղափարախոսություններ, որոնք երբեմն բավական լավ սքողվում են տարատեսակ համամարդկային “տեսք” ունեցող գաղափարներով, երբեմն էլ անսքող գործածվում հանուն սեփական և ընդդեմ այլոց նպատակների կենսագործման: Ահա ինչու կարիք կա հայ մտավորականության այսօրվա և վաղվա ընտրանու ջանքերը միավորել՝ գտնելու այն միջոցներն ու եղանակները, նախագծելու ապագայի այն հնարավոր կարճաժամկետ (պլանա-

[1] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, «Ամարաս», Երևան, 2006, էջ 114:

վորման ժամկետը՝ 1-5 տարի), միջնաժամկետ (պ. ժ.՝ 5-15 տարի), երկարաժամկետ (պ. ժ.՝ 15-50 տարի) և, ինչու չէ, նաև հեռաժամկետ (պ. ժ.՝ 50 տարուց ավելի), ծրագրերը (այդ նպատակով կազմելով նաև ռազմավարական սցենար-մոդելներ), առանց որոնց մեր պետականությունը և ժողովուրդը կունենան անկողմնացույց ու անքարտեզ նավի ճակատագիրը: Ընդ որում, այդ ծրագրերի միջուկը պետք է լինի հայրենատիրության գաղափարը:

Այս հարցերի շուրջ դեռևս XX դ. 20-40-ական թվականներին հայ ռազմաքաղաքական միտքը փորձեր է արել գտնելու որոշակի լուծումներ: Դրա լավագույն արտահայտությունը կարելի է համարել մեծ ռազմագետ և իմաստասեր, հայոց պատմական անցյալի վայրիվերումների էությունը թերևս լավագույնս ըմբռնած, համաշխարհային ռազմաքաղաքական պատմության կարևորագույն իրադարձությունները խորությամբ ու անաչառորեն գնահատած Գարեգին Նժդեհի մտորումները, որոնցից շատերը շարադրվել են քաղաքական բանաձևերի հստակությամբ, որպես լուծման բանալիներ՝ հայոց պատմական անցյալի որոշակի իրողությունների բացահայտման, ներկա իրավիճակի հստակ գնահատման և ապագա խնդիրների կանխատեսման համար:

Ի դեպ, այս առումով ճիշտ կլիներ նաև դիտարկել և ապագայում առավել խորն ուսումնասիրել առհասարակ մեր տարածաշրջանի երկրների և հատկապես մեզանից ոչ շատ հեռու գտնվող Իսրայելի ռազմաքաղաքական պատմությունը: Անցյալ դարի 40-ականների 2-րդ կեսին ստեղծված հրեական պետությունն ու նրա զինված ուժերն իրենց գրեթե 70-ամյա գոյության և հակառակորդ կողմերի գերակշռող ուժերի դեմ արդյունավետ պայքարի պատմությամբ յուրովի հաստատում են Նժդեհի բանաձևած քաղաքական և ռազմական դրույթների ճշմարտացիությունը: Դրույթներ, որոնք նախատեսված էին հայ ազգի և հայկական պետականության զարգացման հեռանկարները նախագծելու համար:

Անհրաժեշտություն է դարձել բազմակողմանիորեն քննարկել հատուցումը որպես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման և ցեղասպանությունների կանխարգելման կարևոր պայման: Ընդսմին, անցյալի խոր իմաստավորման և ներկա աշխարհաքաղաքական իրավիճակի ճիշտ գնահատման հիման վրա հարկավոր է ապագայի մոդելավորումը կոնկրետ կիրառել Հայոց ցեղասպանության հատուցման դեպքում: Պետք է դիտարկել հատուցման որևէ տարբերակ որպես անցյալի պատմական փորձը և ներկայիս քաղաքական իրողությունները հաշվի առնող ապագա հնարավոր ռազմավարության սցենար-մոդել: Հարկավոր է պարզել, թե ի՞նչ լուծումներ պետք է տրվեն Հայոց ցեղասպանության հատուցումն իրականացնելու դեպքում առաջացող բազմաթիվ ու բարդագույն խնդիրներին:

Հայտնի է, որ 20-րդ դարում տեղի ունեցած ցեղասպանություններից միայն մեկն է լիակատար միջազգային ճանաչում ստացել, դատապարտվել և հատուցվել: Եվ դա Հայոց ցեղասպանությունը չէ[1]: Այժմ Հայաստանի Հանրապետությունն արդեն գրեթե քառորդդարյան պատմությամբ անկախ պետություն է, ՄԱԿ-ի լիիրավ անդամ, որին ՄԱԿ-ի ներկայիս անդամ 193 պետություններից 192-ը ճանաչել են: 1965 թ. մինչև այսօր Հայոց ցեղասպանության փաստը պաշտոնապես ճանաչել և դատապարտել է

[1] Սա ևս մտածելու տեղիք պիտի տա, թե ա. ո՞ր ազգի ցեղասպանությունն է ընդունվել և բ. ինչո՞ւ է նման դժվարությունների հանդիպում հայոց ցեղասպանության ճանաչումը:

29 օտար պետություն[1]: Բացի այդ, Մեծ եղեռնի իրողությունն ընդունել ու դատապարտել են որոշ պետությունների մաս կազմող վարչատարածքային միավորներ ու մի շարք միջազգային հեղինակավոր կազմակերպություններ[2]:

1915-1923 թթ. Մեծ Եղեռնի հետևանքով հայերից խլուած Հայրենիքի քարտէզը



Քարտեզը վերցված է ՀՀ ԳԱԱ Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի պաշտոնական կայքից. http://www.genocide-museum.am/eng/mapping_armenian_genocide3.php: Պատրաստել է Ամերիկայի Հայ Դատի Հանձնախումբը՝ The Armenian National Committee of America, www.anca.org՝ Ֆրանսիայի պաշտպանության նախարարության ռազմատեղագրական բաժնի պետ, Ազգերի Լիգայի քարտեզագրական բաժնի պետ, Ֆրանսիայի Պատվո Լեգիոնի անդամ, ծովային ավագ սպա, ՀԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի արտասահմանյան անդամ Զատիկ Խանզատյանի (1886-1980 թթ.) քարտեզի հիման վրա:

Ցեղասպանության «ճանաչում-դատապարտում-հատուցում» քաղաքական շղթայում կարևորագույն նշանակություն ունի «հատուցում» օղակը, առանց որի ցեղասպանությունը իրականում մնում է անպատիժ, ուստի և՝ կրկնության ենթակա: Եվ մենք, Եղեռնի 100-ամյակը բոլորելու հետ միասին, դեռ նոր ենք հասնում այդ օղակին: Սակայն կա է՛լ ավելի կարևոր հանգամանք: Մեզ՝ հայերիս հարկավոր է հատուցման համար պատրաստ լինել տնտեսական, սոցիալական, հոգևոր, քաղաքական, հատկապես **ռազմական և ռազմաքաղաքական** տեսակետներից**:**

Դրան հասնելու կամ գոնե մոտենալու համար հարկավոր է կատարել որոշակի նախապատրաստական աշխատանք՝ հաշվի առնելով թե՛ մեր ազգային պատմական, թե՛ համաշխարհային փորձը:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ պետականության կարևորագույն հատկանիշներից մեկն ապագայի գիտակցված պլանավորումն է: Ընդ որում, որքան արդյու-

[1] Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված պաշտոնական կայք. http://armeniangenocide100.org/ru/states/

[2] ՀՀ ԳԱԱ Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի պաշտոնական կայք. http://genocide-museum.am/eng/

նավետ է ապագայի գիտակցված պլանավորումը, այնքան բարձր է ազգային պետականության և ընդհանրապես ազգի կազմակերպվածության ու հզորության մակարդակը:

Ապագայի գիտակցված պլանավորման մեջ մեծագույն դեր են խաղում թե՛ տվյալ երկրի ռազմաքաղաքական պատմության, թե՛ համաշխարհային պատմության ճշմարիտ ու խորը ընկալումը, թե՛ տվյալ երկրի ազգային անվտանգության ռազմավարությունը, ընդսմին նաև՝ վերջինիս մի մասը կազմող ռազմական անվտանգության ապահովման քաղաքականությունը, որի տեսական հիմքը, ինչպես գիտենք, կազմում է ռազմական դոկտրինը: Սակայն արդյո՞ք ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը[1] և ՀՀ ռազմական դոկտրինը[2] կամ որևէ այլ ապագայապլանավորող փաստաթուղթ ըստ էության անդրադառնում է Հայկական հարցի լուծմանը, մասնավորապես, որևէ սցենար առաջադրում է այդ լուծման համար: Ցավոք, պատասխանը բացասական է: Բնականաբար, ՀՀ Ռազմական դոկտրինը չի անդրադառնում Հայոց ցեղասպանության հարցին ընդհանրապես, միայն հիշատակելով հայ ժողովրդի՝ ցեղասպանության ենթարկված լինելու փաստը: Իսկ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը տալիս է ընդհանուր մի դրույթ՝ չհստակեցնելով հատուցման հարցը, այլ միայն հիշատակելով ճանաչման ու դատապարտման մասին: Բնական է, որ եթե խոսք չի գնում հատուցման մասին, բացառված է որևէ սցենարի մշակումը հատուցման «կտրվածքով»: Գուցե նման մոտեցումը 2007 թ. ինչ-որ տեղ հասկանալի էր, սակայն այժմյան նոր պայմաններում կարիք ունի վերանայման: Անշուշտ, ընդունում ենք, որ շատ բան պետք էլ չէ բացահայտ քննարկել: Սակայն, մյուս կողմից, անհրաժեշտ է գիտական մակարդակով հարցերի լուծումը գտնել:

Այդ առումով կարևոր ենք համարում բոլոր հայագետների, մասնավորապես հայ պատմաբանների, քաղաքագետների ու ռազմագետների կողմից Մեծ Եղեռնի հատուցման առնչությամբ սցենարների կամ ապագայագիտական մոդելների մշակումը և դրանցում առկա հիմնախնդիրների լուծման քայլերի մշակումը՝ հիմք ընդունելով պատմական անցյալի խոր իմաստավորումը, ընդսմին՝ թե՛ հայկական, թե՛ համաշխարհային մասշտաբով:

Ուշագրավ է, որ մեր ներկա հոդվածի լրագրական մի տարբերակը լույս տեսավ մամուլում 2015 թ.՝ «Անդին» հանդեսի 2015 թ. հունիսի և հուլիս-օգոստոսի միացյալ համարներում՝ «Հատուցում Հայոց ցեղասպանության համար. Սևրյան տարբերակ «Ի»-իդեալական (ռազմաքաղաքական տեսանկյուն)» վերնագրով[3]: Սույն հոդվածը նախապատրաստվել էր 2014 թ. դեկտեմբերի վերջին-հունվարի սկզբին և առաջին անգամ հրապարակվել է 2015 թ. մարտի 11-13-ը ՀՀ Պետական կառավարման ակա-

---

[1] Տե՛ս ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, ընդունվել է 2007 թ. հունվարի 26-ին:

[2] Տե՛ս ՀՀ Ռազմական դոկտրին, ընդունվել է 2007 թ. դեկտեմբերի 25-ին:

[3] Հրապարակվել է «Անդին» հանդեսի 2015 թ. հունիսի և հուլիս-օգոստոսի միացյալ համարներում թիվ 6, 7-8, «Հատուցում Հայոց ցեղասպանության համար. Սևրյան տարբերակ «Ի»-իդեալական (ռազմաքաղաքական տեսանկյուն)»: Իմ հոդված-ելույթը նախապատրաստվել էր 2014 թ. դեկտեմբերի վերջին – 2015 թ. հունվարի սկզբին և առաջին անգամ հրապարակվել է ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում տեղի ունեցած գիտաժողովի ժամանակ, 2015 թ. մարտի 11-ին: Հոդվածի օրինակները 2015 թ. մարտ ամսին փոխանցվել են նաև ՀՀ ԳԱԱ Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն պ.գ.դ. Հ.Դեմոյանին և նրա տեղակալ պ.գ..թ. Ս. Մանուկյանին, ինչպես նաև միաժամանակ՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ..դ. Կ.Խաչատրյանին, ով շատ հետաքրքիր համարեց սույն հոդվածը և նունիսկ առաջարկեց առանձին բրոշյուրով տպագրել:

դեմիայում[1]: ″Անդինի″ վերոհիշյալ համարներում հոդվածիս լրագրական տարբերակի լույս տեսնելուց հետո կարծես ի պատասխան Արևմտյան Հայաստանի վերադարձի սցենարների գիտական մշակման իմ առաջարկի, ″Ազգ″ պաշտոնաթերթի 2015 թ. նոյեմբերի 20-ի թիվ 43-ում հրապարակվեց ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական, ՀՀ Պաշտպանության նախարարության Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդական, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովյաննիսյանի հոդվածը՝ վերնագրված «Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում»[2]: Այստեղ պրոֆեսոր Ն.Հովհաննիսյանը ևս առաջարկում է, Արևմտյան Հայաստանի հիմնախնդրի կարգավորման մի շարք հնարավոր տարբերակներ, որոնցից վերջինը նա անվանում է «Իդեալական տարբերակ», այսինքն՝ Արևմտյան Հայաստանի անկախության կամ Հայաստանի Հանրապետությանը միավորելու տարբերակ[3]: Ի դեպ, պարոն Ն.Հովհաննիսյանի հոդվածը բրոշյուրի տեսքով 2016 թ. փետրվարին, որոշ խմբագրմամբ, լրացումներով և քարտեզների հավելմամբ լույս է տեսել ՌԱԿ հրատարակչության շնորհիվ[4]:

Պրոֆ. Ն.Հովհաննիսյանը գրում է. «Առաջին հայացքից այս տարբերակը կարող է համարվել ցնորամտություն, սակայն, այդուհանդերձ, ոչ անհնար: Պատմությունն ավելի անհավատալի թվացող երևույթների ու իրադարձությունների հեղինակը և միաժամանակ վկան է: Նա շարունակում է իր բնական հունով ընթանալ և մարդկությանը նորանոր ու անհնար թվացող անակնկալներ մատուցել[5]»:

Լիովին համաձայն ենք հարգարժան պրոֆեսորի այդ կարծիքին: Ավելին, ինքս նույն տեսակետին էի, որը հրապարակել եմ թե՛ մամուլում, թե՛ վերոհիշյալ միջբուհական գիտաժողովի ժամանակ ունեցած իմ ելույթում: Ըստ իս, մենք կարիք ունենք **նախապատրաստվելու** այդ պահին: Ավելին. որոշակի իմաստով և որոշակի չափով նաև **նախապատրաստելու** այդ պահը: Հիմնախնդրի վիթխարիությունը ցույց կարող է տալ այն բազմաթիվ խնդիրների սոսկ մի մասի պարզ թվարկումը, որ մենք ամբողջովին կամ գոնե գրեթե ամբողջովին պարտավոր ենք ազգովին լուծելու՝ տեր կանգնելով սեփական հայրենիքին:

Հատուցման սցենարները գործողության մեջ դնելու համար հարկավոր է ՌԴ կողմից թեկուզ միակողմանիորեն 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» մասին պայմանագրի դենոնսացումը և ՀՀ կողմից 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի միակողմանիորեն դենոնսացումը[6]: Միաժամանակ միջազգային ասպարեզում պետք է առաջ մղել Սևրի պայմա-

---

[1] ՊԿԱ-ում տեղի ունեցած «20-րդ դարի ցեղասպանություններ. դատապարտում, ճանաչում և հատուցում» խորագրով միջբուհական գիտաժողովի ժամանակ, որտեղ ես այդ ելույթով ներկայացնում էի ՀՀ ՊՆ Ռազմական ինստիտուտը և արժանացա վերոհիշյալ բուհ-ի ռեկտորի՝ Ա.Լոթյանի հավաստագրին:

[2] «Ազգ» պաշտոնաթերթ, 2015 թ. նոյեմբերի 20-ի թիվ 43:

[3] ‘‘Ազգ’’ պաշտոնաթերթ, 2015թ. նոյեմբերի 20-ի թիվ 43:

[4] Տե՛ս Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում, Հրատարակություն Ռամկավար-ազատական կուսակցության, Երևան, 2016:

[5] Նույնը, էջ 64:

[6] ՌԴ քաղաքական ղեկավարությունն առայժմ դիվանագիտական խուսանավման քաղաքականություն է վարում 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի խորհրդա-քեմալական պայմանագրի դենոսնացման

նագրի և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. 22-ի իրավարար վճռի կենսագործման խնդիրը[1]:

Բայց որ թուրք-հայկական հարաբերությունների դարավոր պատմության մեջ նոր և հայերիս համար նպաստավոր սցենարներ հնարավոր են, թե՛ քաղաքական գործիչները, թե՛ քաղաքագետ գիտնականները, թե՛ պատմաբան-արևելագետները չեն բացառում: Պարզապես մեջբերենք պրոֆեսոր Ն.Հովհաննիսյանի վերոհիշյալ հոդվածից ևս մեկ, խիստ բնորոշ նախադասություն. «Պատմաբան-քաղաքագետները չեն բացառում Թուրքիայի տրոհումը քաղաքական, ռազմական և սոցիալական կատակլիզմների, ազգային-էթնիկական լարվածության արդյունքում[2]»:

Իր հոդվածի վերջին պարբերություններից մեկում հարգարժան պրոֆեսոր Ն.Հովհաննիսյանը կատարում է շատ կարևոր մի առաջարկ-եզրակացություն, որը համընկնում է իմ նախորդ հոդվածում և ելույթում արտահայտված դրույթներին: Այն է. «Հայկական հայեցակարգն այս բոլոր հանգամանքները մշտապես պետք է նկատի ունենա, իսկ Հայաստանի իշխանությունները պետք է արթուն լինեն և ակնդետ հետևեն դեպքերի զարգացմանը, ելակետ ունենալով նաև Թուրքիայի տրոհման հա-

---

հարցում: Այս պահին պաշտոնական Մոսկվան պատրաստ չէ բացահայտ առճակատման թուրքերի դեմ: Հմմտ. ՌԴ ԱԳՆ խոսնակի հայտարարությունը՝ ՌԴ ԱԳՆ պաշտոնական կայքում. http://www.mid.ru/ru/press_service/spokesman/briefings/-/asset_publisher/D2wHaWMCU6Od/content/id/2074106#11:
Հայկական կողմին հնարավորինս չվրդովելու, ինչպես նաև իր դիվանագիտական մանևրման ազատությունն ապահովելու նկատառումով՝ ՌԴ ԱԳՆ ՌԴ պետդումայի պատգամավորների ներկայացրած առաջարկին ոչ թե հայտարարությամբ է պատասխանել, այլ առաջարկի նախաձեռնողներին ուղղված առանձին փաստաթղթով: «Արմնյուզ» 17.03.2016 թ. http://news.am/rus/news/317097.html: Որոշ տեղեկություններով, Կարսի պայմանագրի մասնակիցներից մեկը, ընդ որում՝ ոչ Հայաստանի չափ դրանից ահավոր տուժածը՝ մեր դրացի Վրաստանը 2005 թ. միակողմանիորեն դենոնսացրել է այդ պայմանագիրը: Ի դեպ, հավանական է, կարիք կլինի նաեւ միջազգային իրավունքի տեսակետից ապօրինի ճանաչել 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի խորհրդա-քեմալական պայմանագիրը: ՀՀ ՊՆ «Կուրսանտ» պաշտոնաթերթ, 2011 թ. հոկտեմբեր-դեկտեմբերի համար, թիվ 3(32): Հայտնի է, որ թ. փետրվարի սկզբին Ռուսաստանի պետական դումայի համայնավարական խմբակցության երկու պատգամավորներ՝ ՌԴ Կոմկուսի կենտկոմի ղեկավար կազմից կուսակցության փոխնախագահ Վ. Ռաշկինը և ԿԿ քարտուղար Ս. Օբուխովը առաջարկություն են արել ՌԴ նախագահ Վ. Պուտինին և ԱԳ նախարար Ս. Լավրովին՝ չեղյալ հայտարարելու Մոսկվայի պայմանագիրը: Ի դեպ, ՌԴ պետդումայի վերոհիշյալ պատգամավորների առաջարկում գրված է, որ 2005 թ. Վրաստանի խորհրդարանը միակողմանիորեն դենոնսացրել է Կարսի պայմանագիրը: «Իզվեստիա», 2016 թ. փետրվարի 8:

[1] Ի դեպ, անցյալ տարվա նոյեմբերի 23-ին Թուրքիան բավական յուրօրինակ կերպով, կարելի է ասել, «գրեթե» նշեց իր համար ատելի իրավարար վճռի 95-ամյակը՝ վայր գցելով Հայաստանի դաշնակից պետության՝ Ռուսաստանի Սու-24 ռազմաճակատային ռմբակոծիչը...

[2] «Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում», Հրատարակ. Ռամկավար-ազատական կուսակցության, Երևան, 2016, էջ 66: Ի դեպ, պրոֆ. Ն. Հովհաննիսյանի այս եզրակացության համար հիմք է ծառայել նաև 2000 թ. Կանադայում արևելագետների XXXVI միջազգային կոնգրեսի շրջանակներում տեղի ունեցած մի փակ խորհրդակցություն, որին մասնակից է եղել նաև ինքը՝ ըստ իս, այն ժամանակ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենի կարգավիճակով: Ահա այդտեղ ԱՄՆ-ի և Ավստրալիայի ներկայացուցիչների նախաձեռնությամբ քննարկվել է որոշ բազմազգ պետությունների տրոհման հարցը՝ վկայակոչելով ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) տվյալները: Ցուցակում եղել է նաև Թուրքիան: Վերջապես հօգուտ մեր արևմտյան եղեռնագործ հարևանի տրոհման սցենարի է վկայում նաև ԱՄՆ քաղաքագետ գիտնականների՝ Կանզասի համալսարանի պրոֆեսոր Սեմ Բելնի, նյու-յորքցի քաղաքագետ Ամանդա Մերդինի և Բինգհամթոնի պրոֆեսոր Դեյվիդ Քինգրանելի մշակած կանխատեսման «Նոր մոդելը», ըստ որի քայքայման ենթակա պետությունների ցուցակում 6-րդ տեղն է զբաղեցնում նույն այդ Թուրքիան: Տե՛ս «Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում», Հրատարակություն ՌԱԿ, Երևան, 2016, էջ 67, նաև՝ «Ռեգնում» տեղեկատվական գործակալություն, հունվարի 21-ի համապատասխան հաղորդագրությունը:

վանականությունը, որի վերաբերյալ իրենց համոզվածությունն են հայտնել այնպիսի երկու հեղինակավոր մարմիններ, ինչպես ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչությունը և ԱՄՆ-ի քաղաքագետների նոր հայտնագործությունը՝ Նոր մոդելի մշակումները[1]»:

Բնական է, որ արթուն լինելուց և ակնդետ հետևելուց զատ, մենք բոլորս և, ո՛չ միայն Հայաստանի իշխանությունները, այլև բոլո՛ր հայ անհատները, որոնք անտարբեր չեն հայ ազգի և հայկական պետականության ճակատագրի նկատմամբ, հարկ է որ ունենան միասնական՝ համազգային գործունեության ծրագիր և ըստ այդմ պատրաստվեն գալիք իրավիճակներին: Ահա այդ ծրագրի նախապատրաստման նպատակով դիտարկենք հատուցման մի սցենար՝ պայմանականորեն անվանելով տարբերակ «Սևր-Ի» (իդեալական)[2]: Գուցե սա հնարավոր սցենարներից ամենահավանականը չէ, սակայն կարելի է համարել լուծման ուղիների որոնման համար համեմատաբար ընդունելի տարբերակ: Նախ, բացատրենք, թե ինչու ենք պայմանականորեն առաջարկում «Սևր-Ի» (իդեալական) անվանումը: Հայտնի է, որ հայ ազգին և հայկական պետականությանը փոխհատուցելու համար Մեծ եղեռնին հաջորդած տարիներին Առաջին աշխարհամարտում մեզ դաշնակից պետությունները պատրաստել էին մի միջազգային փաստաթուղթ, որը հայտնի է Սևրի պայմանագիր անվամբ: 1920 թ. օգոստոսի 10-ին այն ստորագրել են Ֆրանսիայի Սևր քաղաքում մի կողմից հաղթող պետությունները, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, որի իրավահաջորդն է ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, մյուս կողմից՝ պարտված պետությունը՝ Օսմանյան կայսրությունը, որի իրավահաջորդն է ներկայիս Թուրքական Հանրապետությունը: Այդ պայմանագրի 88-90-րդ հոդվածների տեսքով ներկայացված հայցադիմումի, ինչպես նաև պայմանագրին նախորդած Անտանտի՝ հաղթող տերությունների Սան-Ռեմոյի կոնֆերանսի 1920 թ. ապրիլի 26-ի հայցադիմումի համաձայն՝ ԱՄՆ այդ ժամանակվա նախագահ Վուդրո Վիլսոնը կայացրեց իրավարար վճիռ՝ Հայաստանի և Թուրքիայի սահմանի վերաբերյալ[3]:

Ըստ այդմ թուրքական կողմը պարտավոր էր հայերին հանձնել Արևմտյան Հայաստանի ընդարձակ տարածքներից մի կտոր՝ 90 հազ. քառ. կմ ընդհանուր մակե-

---

[1] Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում, Հրատարակություն Ռամկավար-ազատական կուսակցության, Երևան, 2016, էջ 68:

[2] Պայմանականորեն անվանել ենք «Ի»: Լատինական մեծատառ «Ի»-ն այստեղ նշանակում է «Իդեալական»:

[3] Սույն վճռի պաշտոնական ամբողջական անվանումն է հայերեն թարգմանությամբ՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի վճիռը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ» 22 նոյեմբերի, 1920 թվական: Փաստաթղթի անգլերեն բնագրի վերնագիրը հետևյալն է. "The Decision of the President of the United States of America respecting the Frontier between Turkey and Armenia, Access to the Sea, and the Demilitarization of Turkish Territory adjacent to the Armenian Frontier", 22 Novemner, 1920. Տե՛ս Արա Պապյան, Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Ասողիկ, Երևան, 2012: Ի դեպ, ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի այս իրավարար վճիռն ուժի մեջ մնում ցայսօր և պարտադիր է հետևյալ երկրների համար. Հայաստան, Թուրքիա, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հարավային Աֆրիկա, Հնդկաստան, Պակիստան, Բանգլադեշ, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Չեխիա, Սլովակիա, Սերբիա, Խորվաթիա, Սլովենիա, Բոսնիա և Հերցեգովինա, Մակեդոնիա, Մոնտենեգրո և, իհարկե, Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Տե՛ս նաև Վիլսոնի գծած, ստորագրած ու կնքած քարտեզը՝ ԱՄՆ կոնգրեսի գրադարանում. Scale 1/1,000,000 Library of Congress, Washington DC, ID g743fct000197:

ռեսով, որն ընդգրկում է Էրզրումի (Կարինի), Վանի, Բիթլիսի (Բաղեշի), Տրապիզոնի նահանգների զգալի մասը[1]: Ի դեպ, նույն Սևրի պայմանագրով ևս 90 հազ. քառ. կմ տարածք էր հանձնվում քրդերին՝ ինքավար Քրդստան ստեղծելու համար[2]: Այդ պայմանագիրը և Վիլսոնի իրավարար վճիռը հիշատակվել են 2015 թ. հունվարի 29-ի Համահայկական հռչակագրում[3]:

Հայ-թուրքական սահմանագիծն ըստ 10.08.1920 թ. Սևրի պայմանագրի
Քարտեզը վերցված է «ՀՀ Ազգային ատլաս»-ից, հ. Բ, Երեւան, 2008 թ., հեղ.՝ Բ. Հ. Հարությունյան (1941-2013 թթ.)

[1] Օսմանյան կայսրության Էրզրումի նահանգի ամբողջ 49.700 քառ. կմ տարածքից 40.000 քառ. կմ-ը, Վանի նահանգի ամբողջ 39.300 քառ. կմ տարածքից 20.000 քառ. կմ-ը, Բիթլիսի նահանգի ամբողջ 27.100 քառ. կմ տարածքից 15.000 քառ. կմ-ը, Տրապիզոնի նահանգի ամբողջ 32.700 քառ. կմ տարածքից 15.000 քառ. կմ-ը: Տե՛ս ՀՀ Ազգային ատլաս, հ. Բ, Երեւան, 2008թ., էջ 104: Այդուամենայնիվ, Թուրքական Հանրապետությանն ու «ինքնավար» Քրդստանին են մնում Մեծ Հայքի տարածքի մոտ 40%-ը, բացի այդ՝ Թուրքական Հանրապետությանն է մնում Փոքր Հայքի եւ Կիլիկիայի տարածքների 100%-ը:

[2] Տե՛ս Սեւրի պայմանագիր, անգլերեն տեքստը, Treaty of Peace between the British Empire and Allied Powers and Turkey UK Treaty. Series No.11 of 1920; Command paper Cmd.964 (http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf). հոդվածներ 64-67: Ի դեպ, քրդերին առաջարկվել էր մեկ տարվա ընթացքում իրենց անկախությունը հռչակելու ազատություն, ընդ որում, հնարավորություն էր տրվել այդ հռչակվելիք ինքնավար Քրդստանին միացնելու նաեւ հարակից Մոսուլի՝ նավթով հարուստ քրդաբնակ տարածքները: Այդպիսով, Թուրքիայից դեպի արևելք ստեղծվելու էր երկու նորանկախ պետություն՝ հայկական և քրդական, յուրաքանչյուրը, ի վերջո, գրեթե նույնքան տարածքա-յին ընդգրկմամբ՝ 90-ից մինչեւ 150-160 հազ. քառ. կմ:

[3] Ահա Համահայկական հռչակագրի համապատասխան հատվածը. «Արժևորելով 1915 թվականին միջազգային հանրության կողմից Անտանտի պետությունների մայիսի 24-ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դեմ իրականացված ծանրագույն հանցագործությունը պատմության մեջ առաջին անգամ որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ իրականացված հանցագործություն» որակումը և օսմանյան իշխանություններին պատասխանատվության կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպես նաև 1920 թվականի օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրի և 1920 թվականի նոյեմբերի 22-ի՝ ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը և նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում»: Տե՛ս ՀՀ Նախագահի պաշտոնական կայք, 29.01.2015, http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/:

Դիցուք մեր տարածաշրջանում և ամբողջ աշխարհում ստեղծվել է Հայաստանի Հանրապետության համար հույժ նպաստավոր և եղեռնագործ պետության՝ Թուրքիայի համար, ընդհակառակը, խիստ անբարենպաստ աշխարհաքաղաքական մի իրավիճակ, որում թուրքական կողմը ստիպված է ճանաչել, դատապարտել և որպես հատուցում Հայաստանի Հանրապետությանը հանձնել վերոհիշյալ մոտ 90 հազ. քառ. կմ ընդհանուր մակերեսով տարածքը: Հարց է առաջանում. արդյոք Հայաստանի Հանրապետությունը և աշխարհասփյուռ հայությունը կարողացե՞լ է մեր անկախության շուրջ քառորդ դարում իրոք պատրաստվել նման սցենարի: Ընդգծեմ. մենք չենք խոսում պատերազմական գործողություններով տարածքներն ազատագրելու, այլ միայն Թուրքիայի կողմից «Սևրյան» սահմաններում ընդգրկված տարածքները ՀՀ-ին խաղաղ կերպով հանձնելու մասին:

Ըստ մշակվող սցենարի, մեզ հանձնվելիք Արևմտյան Հայաստանի վերոհիշյալ տարածքները պետք է առնվազն տնտեսապես և քաղաքականապես **յուրացվեն** գոյություն ունեցող հայկական պետության կողմից: Նկատի ունենաք, որ ներկայիս հայկական պետականության տարածքը իր երկու սուբյեկտներով՝ ՀՀ-ն և ԼՂՀ-ն միասին կազմում է մոտ 42 հազ քառ. կմ: Ուստի՝ ավելի քան երկու անգամ պակաս, քան հենց միայն մեզ հանձնվելիք տարածքը: Այսինքն՝ Միացյալ Հայաստանի տարածքը (ներկայիս ՀՀ-ն, Արցախի Հանրապետությունը և վերստացած Արևմտյան Հայաստանի նահանգների մի մասը) կազմելու է 133 հազ. քառ. կմ՝ ներկայիս մեր ունեցած տարածքից շուրջ 3 անգամ ավելի: Չմոռանանք նաև այն արևելահայկական տարածքների մասին, որ մեզանից խլվեցին 1920թ. աշնանային թուրք-հայկական պատերազմի արդյունքում՝ Կարսի մարզի ամբողջ տարածքի և նախկին Երևանի նահանգի Սուրմալուի կամ Իգդիրի գավառի տեսքով[1]: Ներկայումս դրանց տեղում ստեղծված են թուրքական հանրապետության երեք վարչատարածքային առաջին աստիճանի միավորներ՝ Կարսի, Իգդիրի և Արդահանի իլերը (նահանգները): Դրանց ընդհանուր տարածքը կազմում է մոտ 20 հազ. քառ. կմ և ունեն մոտ 700 հազ. բնակիչ: Վերջապես կա նաև մոտ 8 հազ քառ. կմ տարածքով և մոտ 200 հազ. համշեն և լազ բնակչությամբ Արդվինի նահանգը, որը թեպետ Արևմտյան Հայաստանի՝ ՀՀ-ին հատկացվելիք վերոհիշյալ տարածքի մեջ չէր մտնում, սակայն միշտ կազմել է պատմական Հայաստանի մասը՝ ներկայացնելով Մեծ Հայքի Գուգարք նահանգի արևմտյան և Տայք նահանգի կենտրոնական ու հյուսիսային գավառները: Այսպիսով, նկատի առնելով այդ բոլոր տարածքների վերադարձման հավանականությունը՝ ՀՀ-ին անցնելիք տարածքների մակերեսն անգամ ամենակոպիտ հաշվարկներով կկազմի մոտ 120 հազ. քառ. կմ: Դրանցից մոտ 90 հազ. քառ. կմ՝ նախատեսված էր Սևրի պայմանագրով և Վիլսոնի իրավարար վճռով, իսկ մնացած 30 հազար քառ. կմ-ը, փաստորեն Թուրքիան զավթել էր Արևելյան Հայաստանից՝ թուրք-հայկական երկրորդ պատերազմի արդյունքում[2], ինչպես նաև այդ զավթումներին, իբր, «իրավական տեսք» տված Մոսկվայի ու Կարսի անօրինական պայմանագրերի կնքման հետևանքով[3]: Նշված տարածքներում ներկայումս բնակվում է մոտ 8-10 միլիոն տարալեզու, տա-

[1] Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, հատոր IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 254-285, 324-339, 371-374:
[2] Տե՛ս նույնը, էջ 254-285:
[3] Նույնը, էջ 324-339, էջ 371-374:

ռացեղ և տարակրոն բնակչություն: Ստորև բերել ենք աղյուսակ, որտեղ համացանցում առկա բաց աղբյուրների տվյալների հիման վրա[1] փորձել ենք տալ 2009-2013 թթ. դրությամբ Արևմտյան Հայաստանի՝ մեզ վերադարձնելիք մասի բնակչության թիվը: Անշուշտ, ավելի բարդ կլինի պարզել նրա ազգային կազմը:

Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող հայկական տարածքներում ստեղծված վարչատարածքային միավորները

Արևմտյան Հայաստանի՝ Սևրի պայմանագրով և Վիլսոնի իրավարար վճռով գծված հայ-թուրքական պետական սահմանագծից դեպի արևելք ընկած մասը

h/h	«իլ» (մարզ)	տարածքը՝ քառ. կմ	Բնակչության թիվ	վարչական կենտրոնը՝ հայերեն անվանումով	վարչական կենտրոնի բնակչությունը	այլ նշումներ
	Աղրի	11.315	600.000	Կարաքյոսե, Ղարաքիլիսա՝ **Բագավան**[2]	80.000	Ալաշկերտ և Բայազետ գավառները
	Արտահան	5.495	150.000	**Արտահան**	20.000	1878-1914թթ. Ռուսական կայսրության մեջ:
	Արդվին	7.493	200.000	**Արդվին**	25.000	
	Բայբուրթ	4.043	100.000	**Բաբերդ**	35.000	
	Բինգյոլ	8.402	260.000	**Բյուրակն**	70.000	
	Բիթլիս	8.413	400.000	**Բաղեշ**	50.000	
	Վան	20.927	1.100.000	**Վան**	300.000	
	Գիրեսուն	7.151	550.000	**Կերասուն**[3]	90.000	
	Գյումուշհանե	6.125	200.000	Արգիրոկաստրոն՝ **Արծաթահանք (Ծանախ)**[4]	35.000	
	Կարս	9.594	350.000	**Կարս**	80.000	1878-1914թթ. Ռուսական կայսրության մեջ:
	Մուշ	8.023	500.000	**Մուշ**	70.000	
	Ռիզե	3.792	370.000	Ռիզե՝ **Երիզա**	80.000	Սևծովյան Երիզա
	Տրապիզոն	4.495	1.000.000	Տրապիզոն	220.000	
	Իգդիր	3.584	180.000	Իգդիր՝ **Ցոլակերտ**[5]	65.000	1878-1914թթ. Ռուսական կայսրության մեջ:
	Էրզինջան	11.974	600.000	**Երզնկա**	115.000	
	Էրզրում	24.741	1.000.000	**Կարին**	380.000	20 տարի

[1] Մասնավորապես օգտագործել ենք Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի կայքում առկա որոշ տվյալներ. http://www.turkstat.gov.tr/PreHaberBultenleri.do?id=8428&tb_id=1, ինչպես նաև դրա վրա հղումներ կատարող անգլիալեզու և ռուսալեզու համացանցային տարբեր աղբյուրներ:
[2] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 34:
[3] Նույնը, հ. 3, էջ 103:
[4] Նույնը, հ. 1, Երևան, 1986, էջ 915-917:
[5] Տե՛ս ՀՀ Ազգային ատլաս, հ. Բ, Երեւան, 2008, էջ 48:

						առաջ անձամբ եմ տեսել Կարին քաղաքի մատույցներում դրված ″Erzurum″ ցուցատախտակը. թուրքերեն գրված էր՝ «300.000 nüfüs» (300.000 «շունչ», բնակիչ):
ԸՆԴԱՄԵՆԸ՝		**144.937**	**7.600.000**			
Վերը թվարկված 16 մարզերի՝ «իլ»-երի տարածքի ընդհանուր մակերեսը գրեթե 25 հազ. քառ. կմ-ով ավելի մեծ է ստացվել, քանզի թուրքական արդի«իլ»-երից մի քանիսի տարածքը «Սևրյան սահմանից» դեպի արևմուտք և հարավ է ընկած:						

Վերը թվարկեցինք մոտավորապես այն տարածքները, որոնք ըստ սցենարի պետք է անցնեն կամ հանձնվեն ՀՀ-ին և յուրացվեն նրա կողմից: Այժմ գոնե ծանոթացման կարգով դիտարկենք այն **ռազմական ուժերը**, որոնք տեղակայված են այդ տարածքում: Ըստ բաց աղբյուրների տվյալների, որոնց թվում են այնպիսի հեղինակավոր միջազգային ռազմաքաղաքական հետազոտական կազմակերպություններ, ինչպիսիք են Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտության ինստիտուտը (Stockholm International Peace Research Institute, SIPRI), Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտը (International Institute for Strategic Studies, IISS), «Գլոբալ կրակային հզորություն» (Globalfirepower) միջազգային տեղեկատվական-վերլուծական կազմակերպությունը[1], Թուրքիան աշխարհի պետությունների մեջ իր զինված ուժերի սովորական սպառազինությունների հզորությամբ զբաղեցնում է 10-րդ տեղը: Բնակչության թիվը՝ մոտ 80 մլն: Մարդուժի ընդհանուր թիվը՝ ավելի քան 41 մլն, զինծառայության համար պիտանի՝ ավելի քան 35 մլն: Տարեկան զինծառայության տարիքի են հասնում մոտ 1 մլն 375 հազ. հոգի: Բանակի ակտիվ անձնակազմում՝ մոտ 410.500 հոգի, ակտիվ պահեստազորում՝ 185.630 հոգի[2]: Սպառազինության հիմնական տեսակները. տանկերը՝ 3.788 միավոր, մարտական զրահամեքենաները՝ 7.550, ինքնագնաց հրետանին՝ 1.013, քարշակվող հրետանին՝ 697, համազարկային կրակի ռեակտիվ համակարգերը՝ 811 միավոր: Օդուժը՝ 1007 միավոր, որից կործանիչ-կալանիչ ինքնաթիռներ՝ 207, գրոհիչ ինքնաթիռներ՝ 207, փոխադրական օդանավեր՝ 439, ուսումնամարտական՝ 276, ուղղաթիռներ՝ 445, գրո-

[1] Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտության ինստիտուտի (Stockholm International Peace Research Institute, SIPRI), Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի (International Institute for Strategic Studies, IISS) և այլ միջազգային հեղինակավոր ռազմաքաղաքական հետազոտական կենտրոնների բաց աղբյուրներում հրատարակված տվյալներով: Տե՛ս IISS, The Military Balance 2013. էջ 215, ISBN 978-1-85743-680-8: Նաև՝ Blandy, C. W. "Azerbaijan: Is War Over Nagornyy Karabakh a Realistic Option?" Advanced Research and Assessment Group. Defence Academy of the United Kingdom, Caucasus Series 08/17, 2008, p.16.

[2] Տե՛ս www.gloablfirepoewr.com, Turkey.

հային ուղղաթիռներ՝ 64 միավոր: Ռազմանավերը՝ 194 միավոր, որից ֆրեգատ՝ 16, հետախուզանավ՝ 8, սուզանավ՝ 13, առափնյա պաշտպանության նավ՝ 29, ականակիր-ականորսիչներ՝ 15: 2015թ. ռազմական բյուջեն՝ 18 մլրդ 185 մլն ԱՄՆ դոլար: Թուրքական պետությունն իր զինված ուժերի, այսպես կոչված, ակտիվ անձնակազմի, պահեստազորի և ռազմականացված ուժերի մոտ մեկ միլիոն ընդհանուր թվից բռնազավթված Արևմտյան Հայաստանում՝ Հայաստանի Հանրապետության դեմ տեղակայել է զգալի ռազմական ուժեր, որոնց մոտավոր կազմը հետևյալն է: Ցամաքային զորքերի 3-րդ դաշտային բանակը (3ԴԲ). շտաբը՝ Երզնկա (Էրզինջան) քաղաքում, զորքերի խմբավորումները՝ Արևմտյան Հայաստանի հյուսիսային և կենտրոնական մարզերում, այդ թվում ՀՀ և Վրաստանի պետական սահմանների մերձակա շրջաններում: Զորքերի ընդհանուր թիվը՝ մոտ 200 հազար: 3ԴԲ-ի կազմում՝ 9-րդ բանակային կորպուսը (9ԲԿ), որի շտաբը Կարինում է (Էրզրում). իր կազմում ունի՝ 4-րդ տանկային բրիգադը, 1-ին, 2-րդ, 9-րդ, 12-րդ, 14-րդ, 25-րդ մեքենայացված և 34-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ հետևակային բրիգադները: Նախկինում 3ԴԲ-ի կազմում էր նաև 8-րդ բանակային կորպուսը (8ԲԿ), սակայն վերջերս այդ կորպուսը մտցվել է հարևան 2-րդ դաշտային բանակի (2ԴԲ) կազմի մեջ, որի շտաբը Մալաթիայում է: Կարծում ենք, **Թուրքիան այդ վերակազմավորումները կատարել է միջազգային հանրությանը մոլորեցնելու և Սիրիայի ու քրդերի դեմ պատերազմին հնարավորինս ավելի մեծ քանակությամբ ու միջազգային պայմանագրերով չվերահսկվող ռազմական ուժեր ներգրավելու համար:** Փոխարենը 3ԴԲ-ի կազմի մեջ է մտցվել 4-րդ բանակային կորպուսը (4ԲԿ), որի շտաբը Անկարայում է: Այսինքն՝ Արևմտյան Հայաստանի ուղղությունում գործող բանակային կորպուսների թիվն իրականում ավելացվել է: 4ԲԿ-ի կազմում են 1-ին հետևակային, 28-րդ մեքենայացված և 58-րդ հրետանային բրիգադները: Ի դեպ, Երզնկայում է տեղակայված նաև 59-րդ ուսումնական հրետանային բրիգադը: Հայկական լեռնաշխարհի հարավային մասում և Կիլիկիայում տեղակայված է Թուրքիայի զինված ուժերի ցամաքային զորքերի 2-րդ դաշտային բանակը (2ԴԲ), որի կազմում այժմ երեք բանակային կորպուս կա՝ 6-րդ, 7-րդ, 8-րդ: 2ԴԲ-ի ընդհանուր թիվը ոչ պակաս, քան 150.000 ասկյար և սպա է: 2ԴԲ-ի 8-րդ բանակային կորպուսը (8ԲԿ), որի շտաբը գտնվում է Էլյազիգում (Խարբերդ), իր կազմում ունի 20-րդ և 172-րդ տանկային բրիգադները: 6ԲԿ-ի շտաբը՝ ք. Ադանա. իր կազմում ունի 5-րդ տանկային և 39-րդ մեքենայացված բրիգադներ: 7ԲԿ-ի շտաբը՝ ք. Դիարբեքիր. իր կազմում ունի 3-րդ հետևակային դիվիզիան (իր հերթին բաղկացած 6-րդ հետևակային և 6-րդ ու 16-րդ մեքենայացված բրիգադներից), ինչպես նաև 23-րդ հետևակային և 70-րդ մեքենայացված բրիգադները: Եթե այդ ամենին ավելացնենք նաև թուրքական ժանդարմերիայի, այսինքն՝ ներքին անվտանգությունը պահպանող զորքերի թիվը, ապա կարող ենք եզրակացնել, որ Արևմտյան Հայաստանում Թուրքիան պահում է գրեթե կես միլիոնանոց զորային խմբավորում: Ընդ որում մոտ կեսը տեղակայված է ՀՀ սահմաններից ոչ հեռու: Հաշվի առնենք, որ Թուրքիան ունի բավական հզոր ռազմաօդային ուժեր (ՌՕՈՒ), որոնց կազմում առկա 1.000-ից ավելի ինքնաթիռներից և մի քանի հարյուր անօդաչու թռչող սարքերից 200-ը բավական արդիական և հզոր գրոհային ինքնաթիռներ են: Ընդ որում թուրքական ՌՕՈՒ-ում առկա է միջուկային զենքով զինված երկու ավիաէսկադրիլիա, որոնցից առնվազն մեկը կարող է օգտագործվել մեր դեմ: Ավելին, թուրքական օդուժի կազմում դեռ 2013 թ. ստեղծվել է

ռազմա-տիեզերական հրամանատարություն, 2001-ից Թուրքիան զարկ է տվել տիեզերական սեփական տեխնոլոգիաների զարգացմանը, ՌԴ-ի, ՉԺՀ-ի, Ղազախստանի և այլ երկրների օգնությամբ տիեզերք արձակել 4 արբանյակ, որոնք կատարում են ռազմական, տեղեկատվական-հետախուզական խնդիրներ: Ընդ որում գումար չխնայելով՝ թուրքերը պատրաստվում են մինչև 2020 թվականը ստեղծել շուրջ 16 արբանյակներից բաղկացած տիեզերական «տորմիզ[1]»: Արդեն իսկ այժմ թուրքերն ունեն 800 կմ հեռահարությամբ հրթիռների ստեղծման հնարավորություն և պատրաստվում են մոտակա տարիներին դրանց հեռահարությունը հասցնել մինչև 2.500 կմ-ի: Ուստի պետք է անենք համապատասխան եզրակացություններ թե՛ մեր հակաօդային, հակահրթիռային և հակաարբանյակային պաշտպանությունը ծավալելու, թե՛ մեր օդուժը հզորացնելու նկատառումներով՝ երկնքում և տիեզերքում գերիշխանությունը թուրքական զինուժին չթողնելով:

Թուրքական զինուժի մասին վերոհիշյալ ամբողջ տեղեկատվությունը հաշվի առնելով մենք պետք է կարողանանք համապատասխան ռազմական պոտենցիալ ստեղծել այդ ուղղության վրա: Ուստի, Արևմտյան Հայաստանում տեղակայվելիք ՀՀ-ի զինուժի զորամիավորումներն ու զորամասերը իրենց ընդհանուր **քանակությամբ** թուրքական զինուժի համապատասխան միավորումներին նույնիսկ զիջելով, **կրակային հզորությամբ** չպետք է զիջեն, իսկ **շարժունությամբ**, **արագ արձագանքելու ընդունակությամբ** ու **պատրաստվածությամբ** անգամ պետք է գերազանցեն նրանց:

Ըստ բաց աղբյուրների տվյալների, որոնց թվում են Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտության ինստիտուտը (Stockholm International Peace Research Institute, SIPRI), Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտը (International Institute for Strategic Studies, IISS)[2], ներկայիս մոտ 42 հազ. քառ. կմ տարածքի պաշտպանության համար ՀՀ-ն և ԼՂՀ-ն միասին պահում են մոտ 66 հազ. ընդհանուր թվաքանակով բանակ: Դա ՀՀ ԶՈՒ հինգ բանակային կորպուսներն են և ԼՂՀ ՊԲ-ն, ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ ԶՈՒ կենտրոնական ենթակայության մի շարք զորամասերն ու ստորաբաժանումները: Ի դեպ, թե՛ 2013թ., թե՛ 2016 թ. մարտին ՌԴ մամուլում ՀՀ ԶՈՒ մասին հրապարակել է ՌԴ քաղաքական և ռազմական վերլուծության ինստիտուտի փոխտնօրեն Ալեքսանդր Խրամչիխինը՝ Հայաստանը ցինիկաբար անվանելով «Հարցականներով ֆորպոստ»[3]: Համաձայն նրա

---

[1] Տե՛ս Defense News (Պաշտպանական լուրեր), 08.01.2016, http://www.defensenews.com/story/defense/air-space/isr/2016/01/08/turkey-seeks-build-indigenous-satellite/78349578/, նաև նույնը՝ 21.06.2015, Daily news (Օրվա լուրեր), 21.10.2014, Space daily" (Տիեզերական օրաթերթ), 10.01.2016, ինչպես նաև՝ Space generation advisory council (Տիեզերական սերնդի խորհրդատվական խորհուրդ), http://www.spacegeneration.org/sgac-regions/middle-east/turkey.html, Space news"" (Տիեզերքի լուրեր) 23.04.2015, Turkish weekly (Թուրքական շաբաթաթերթ), 06.02.2016:

[2] Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտութան ինստիտուտի (Stockholm International Peace Research Institute, SIPRI), Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի (International Institute for Strategic Studies, IISS) և այլ միջազգային հեղինակավոր ռազմաքաղաքական հետազոտական կենտրոնների բաց աղբյուրներում հրատարակված տվյալներով: Տե՛ս IISS, The Military Balance 2013. էջ 215, ISBN 978-1-85743-680-8: Նաև՝ Blandy, C. W. "Azerbaijan: Is War Over Nagornyy Karabakh a Realistic Option?" Advanced Research and Assessment Group. Defence Academy of the United Kingdom, Caucasus Series 08/17, 2008, p.16.

[3] Александр Храмчихин, Форпост с вопросами. Военно-промышленный курьер, Но. 9, 9.03.2016.

տվյալների, որոնք, ըստ իր հայտարարության[1], վերցված են անգլիալեզու բաց աղբյուրներից, ՀՀ-ն ունի հինգ բանակային կորպուս:

Հաշվի առնելով, որ արևելյան կողմից ՀՀ-ի դեմ ռազմական զգալի ուժեր է պահում Ադրբեջանը (չորս բանակային կորպուս, մեկ առանձին համազորային բանակ, մոտ 600 տանկ, մոտ 500 ՀՄՄ, մոտ 1.000 զրահափոխադրիչ, 600 ծանր հրետանային կայանք և 12 մարտավարական «Տոչկա» հրթիռային արձակման կայանքներ, 100-ից ավելի մարտական ինքնաթիռ և 150 ուղղաթիռ), ՀՀ-ն չպետք է թուլացնի իր ռազմական հզորությունը նաև արևելյան սահմաններում: Դեռ հաշվի չենք առնում Վրաստանի, ապագա Քրդստանի և իրանական ուղղությունները (վերջինում առկա է առնվազն 15 մլն ազերի թուրք): Նկատի ունենանք նաև ապագա ծովային սահմանի առկայությունը: Հետևաբար կունենանք բազմաթիվ **ռազմաքաղաքական** հիմնախնդիրներ, որ մենք պարտավոր ենք լուծել՝ ազգային իղձերի իրականացման ճանապարհին:

Ապագա Միացյալ Հայաստանի երեքից երեքուկես անգամ ավելի մեծ տարածքի պաշտպանության համար մենք կարիք կունենանք պահելու առնվազն երեք անգամ ավելի բանակ՝ այսինքն՝ շուրջ 190 հազար: Ի դեպ, իր հսկողությանը վերադարձված հայկական տարածքների պաշտպանությանը, թեպետ ավելի փոքր մասշտաբներով, բախվել էր նաև Հայաստանի 1-ին Հանրապետությունը (1918-1920): Թե ինչ աղետալի հետևանքներ ունեցավ տարածքի ռազմական պաշտպանության անբավարար կազմակերպումը, լավ հայտնի է 1920թ. թուրք-հայկական պատերազմի պատմությունից[2]:

Հաշվի առնելով տարածքների մեծությունը, կարիք կլինի զարկ տալ հայկական օդուժի, աերոմոբիլային ուժերի, զենիթահրթիռային զորքերի և օպերատիվ-մարտավարական «երկիր-երկիր» հրթիռային համակարգերով զինված զորամասերի ստեղծմանն ու զարգացմանը:

Բացի այդ, հաշվի առնելով Սև ծով ելքի, ընդ որում՝ գրեթե 300 կմ առափի առկայությունը, Միացյալ Հայաստանը պետք է ստեղծի սեփական ծովային ուժեր: Ավելորդ եմ համարում բացատրել դրա անխուսափելիությունը: Խնդիրը որոշ չափով պատկերացնելու համար բերենք երկու պատմական օրինակ: Հարևան սևծովյան երկիրը՝ Վրաստանը 1992-2008 թթ. կարողացել է ստեղծել առավելագույնը 22 մանր ու միջին նավերից բաղկացած ռազմական նավատորմ, որի անձնակազմի թիվը չի գերազանցում 1.000-2.000-ը: Ի դեպ, 2008 թ. օգոստոսյան պատերազմի ժամանակ վրացական նավերի կեսը ոչնչացվեց, ռազմանավատորմը կազմացրվեց, իսկ մնացած նավերը փոխանցվեցին ՆԳՆ-ին՝ որպես առափնյա պահպանության ծառայության նավեր: Մեր մյուս հարևանը՝ 9 միլիոնանոց Ադրբեջանը, տարածաշրջանի համար վիթխարի իր նավթադոլարային բյուջեով, 24 տարում՝ 1992-2016 թթ., կարողացել է ստեղծել մոտ 70 հիմնականում մանր ու մի քանի հին միջին նավերից բաղկացած ռազմական նավատորմ, մոտ 2.500 անձնակազմով: Չնայած ԱՄՆ-ի և Թուրքիայի ցուցաբերած զգալի աջակցությանը՝ նա Կասպից ծովում համարվում է ամենաթույլ

---

[1] Խրամչիխինի այս հայտարարությունը հրապարակվել է «Գոլոս Արմենիի» թերթում հրապարակված հարցազրույցում. «Голос Армении», 11.03.2016.

[2] Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, հատոր IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 254-285:

և հետամնաց նավատորմը[1]: 2014 թ. Ադրբեջանին վերջապես հաջողվել է նաև սուզանավեր ձեռք բերել[2]:

Անդրադառնանք ևս մեկ հիմնախնդրի՝ **Ապագա Միացյալ Հայաստանի ռազմական բյուջեին:** Անտարակույս, այն ներկայ բյուջեից[3] առնվազն երեք-չորս անգամ ավելի պետք է լինի[4]: Եվ նույնիսկ այդ դեպքում կարող է բավարար չհամարվել պաշտպանական բոլոր խնդիրների լուծման համար:

Մյուսը նոր ազատագրված Արևմտյան Հայաստանի տարածքի ներքին անվտանգության հարցն է: Հարկավոր է լինելու եռապատկել ՀՀ ոստիկանության բոլոր ծառայությունների, նաև ոստիկանության զորքերի թվաքանակը, ազգային անվտանգության ծառայության և նրա հատուկ նշանակության զորքերի անձնակազմը: Ներկայումս ՀՀ-ի և Արցախի Հանրապետության արտաքին պետական սահմանի ընդհանուր երկարությունը մոտ 1.350 կմ է, որից մոտ 270 կմ՝ Թուրքիայի հետ: Վերջինս համատեղ պահպանվում է ռուս սահմանապահների հետ, և հենց այդ սահմանների ուղղությամբ է տեղակայված ՌԴ ռազմական բազան: Հայկական պետականության ներկայիս պետական սահմանների մնացած մասից մոտ 770 կմ-ը Ադրբեջանի հետ է (այդ թվում՝ Նախիջևանի ինքնավար հանրապետության հետ՝ 222 կմ), մոտ 143 կմ՝ Իրանի հետ, իսկ մոտ 165 կմ՝ Վրաստանի հետ: Միացյալ Հայաստանի նոր սահմանագիծը գրեթե երեք անգամ ավելի երկար է լինելու՝ մոտ 4.300-4500 կմ: Նկատի ունենանք, որ ծովային սահմանագիծը՝ մոտ 285 կմ՝ մի կողմից Վրաստանի, մյուս կողմից նույն Թուրքիայի հետ է լինելու, գումարած բաց ծովից եկող ռազմական ու ահաբեկչական սպառնալիքների չեզոքացման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ մեր նոր սահմանագիծը Արևմտյան Հայաստանում Թուրքիայի հետ կկազմի շուրջ 1.000 կմ: Բացի այդ, նոր սահմանագիծը Արևմտյան Հայաստանում ավելի քան 1200 կմ կլինի Քրդստանի հետ[5]: Չենք կարող անտեսել Վրաստանի հետ սահմանագիծը, որը ներկայիս հայ-վրացական սահմանագծից 2,5 անգամ ավելի երկար կդառնա: Վերջապես, ուշադրություն պետք է դարձնել նաև հայ-իրանական սահմանին, որը Արաքս գետով անցնող համեմատաբար ապահով այժմյան բնական սահմանագծի 143 կմ-ից կդառնա ավելի քան 300 կմ: ՀՀ նոր սահմանների վերաբերյալ բավական երկար շարադրանքին ծանոթանալուց հետո, թերևս, պարտադիր չէ սահմանապահ լինել, հասկանալու համար, թե մարդկային ու նյութատեխնիկական ինչպիսի վիթխա-

---

[1] http://haqqin.az/news/50700:

[2] http://flot.com/news/navy/index.php?ELEMENT_ID=169533:

[3] Ավելի քան 194 մլրդ ՀՀ դրամ 2014թ., 199 մլրդ ՀՀ դրամ 2015թ. և 208,014 մլրդ դրամ 2016 թ., այսինքն՝ շուրջ $430 մլն ԱՄՆ դոլար: 2015-ի համեմատ 2016թ. պաշտպանական բյուջեն դրամական արժեքով աճել է 4.5%-ով, իսկ դոլարային համարժեքով՝ 3.1%-ով: Տե՛ս 2016թ. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքը. http://www.parliament.am/draft_docs5/K-862/K-862_orenq.pdf:
Տե՛ս նաև՝ http://knoema.ru/SIPRI2015/sipri-military-expenditure-database-1988-2014?country=1001270-armenia:

[4] Տե՛ս SIPRI-ի տվյալները. http://knoema.ru/SIPRI2015/sipri-military-expenditure-database-1988-2014?country=1001270-armenia, նաև՝ http://knoema.ru/SIPRI2015/sipri-military-expenditure-database-1988-2014?country=1001270-azerbaijan: Ի միջի այլոց, նավթադոլարներով հղփացած Ադրբեջանը վերջին 10 տարում իր ռազմական բյուջեն ավելի քան 25 անգամ մեծացրել է, հասցնելով 4,8 մլրդ ԱՄՆ դոլարի, այնինչ ՀՀ-ին ռազմական բյուջեն ավելացել է շուրջ 4 անգամ, հասնելով 430 մլն դոլարի...

[5] Որին նույն այն Սևրի պայմանագրով ինքնավարության կարգավիճակ և Արևմտյան Հայաստանի տարածքից՝ 90 հազ քառ. կմ էր նախատեսվում, իսկ այժմ՝ Իրաքում այդ կարգավիճակով քրդական պետական կազմավորում արդեն իսկ կա:

րի ռեսուրսներ են անհրաժեշտ նման երկարաձիգ և բարդ սահմանը պահպանելու և պաշտպանելու համար: Չմոռանանք, որ մեր սահմանագծի մեծ մասը, ստիպված կլինեն պաշտպանել ո՛չ թե կամ ո՛չ միայն սահմանապահ զորքերը, այլև ցամաքային զորքերի մոտոհրաձգային և մյուս զորամասերը, որոնց անձնակազմի զգալի մասը հարկադրված կլինի մարտական հերթապահություն կատարել: Չպետք է բացառել նաև սահմանային դիրքերում հնարավոր «դիպուկահարների պատերազմը»: Էլ չենք խոսում դիվերսիոն խմբերի հարձակումների և հրետակոծման ադրբեջանական ավանդույթների վտանգավոր «շարունակականության» մասին[1]:

Առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ մեզ «հանձնվելիք» արևմտահայկական նահանգների վերոհիշյալ հողերի հետ միասին մեզ անցնելու է դրանց վրա բնակվող տարացեղ, տարալեզու ու տարակրոն մի հսկայական զանգված, որը կազմում է տարբեր տվյալներով 8,5-ից մինչև 10 մլն մարդ[2]:

Սրանով ոչ թե ավարտենք, այլ պարզապես ընդհատենք ռազմաքաղաքական հիմնախնդիրների այն մեծ շարքի թվարկումը, որոնց բախվելու ենք Հայոց ցեղասպանության հատուցման շրջանակներում, եթե փորձենք կյանքի կոչել դրա սցենարներից որևէ մեկը: Տվյալ դեպքում դիտարկեցինք, ավելի ճիշտ փորձեցինք սկսել դիտարկել այսպես կոչված «Սևրյան-իդեալական» տարբերակը, երբ տարածքները **խաղաղ** կերպով կարող են «հանձնվել» Հայաստանի Հանրապետությանը:

Կարծում ենք՝ սոսկ այդքանի թվարկումը բավական է հասկանալու համար, թե ինչ վիթխարի խնդիրներ պետք է լուծենք մենք ազգովին՝ Հայոց ցեղասպանության հատուցման նույնիսկ ամենանպաստավոր ու պարզագույն սցենարին պատրաստ լինելու համար:

Եզրակացություններ

Միացյալ Հայաստանի ստեղծումը, հետագա գոյությունը և առաջընթաց զարգացումը անհնար կլինեն առանց բարձր զարգացած գիտության և տեխնիկայի, հզոր արդյունաբերության, այդ թվում՝ **ռազմական արդյունաբերության:** Միանշանակ է, որ ապագան պատկանելու է միջուկային և տիեզերական տեխնոլոգիաներին տիրապետող պետություններին: **Բանակի թիվը** կարող է չլինել մեծ, սակայն նրա **կրակային հզորությունը** և **արագ արձագանքման ընդունակությունը** պետք է հասնեն ժամանակի հնարավոր բարձրակետերին: Պետք է զարկ տրվի ռոբոտատեխնիկայի, այդ թվում՝ **մարտական ռոբոտատեխնիկայի** արտադրությանը: Ընդհանրապես ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը կարևոր պայման է ապագա ՀՀ-ի գոյության համար: Պետք է հասնել ոչ միայն ռազմատեխնիկական հավասարության, այլև՝ գերազանցության հարևան պետությունների նկատմամբ, դրանով իսկ չէզոքացնելով որոշ երկրների մարդկային ռեսուրսների քանակական գերազանցությունը: Բացի

---

[1] ՀՀ մամուլի միջոցների 2015թ. տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ միայն մեկ տարում հայ-ադրբեջանական սահման-շփման գծի վրա ՀՀ ԶՈՒ կորուստների թիվը կազմել է երեք ու կես տասնյակ զինվոր և սպա:

[2] Ներառյալ թուրքեր, քրդեր, համշեններ, լազեր և այլ էթնոսների ներկայացուցիչներ: Այդ թվում՝ Թուրքիայի ներկայիս բնակիչ 12-15 մլն քրդերի մի զգալի զանգված, որոնցից շուրջ 5 մլն-ը այժմ բնակվում են մեր «Սևրյան» սահմաններով ապագա տարածքում:

այդ, դա կարող է լրջորեն նպաստել հայաստանյան հիմնարար և կիրառական գիտության վերընթաց արագ զարգացմանը: Էներգիայի սկզբունքորեն նոր աղբյուրների հայտնագործումը և միջուկային նոր էլեկտրակայանների ստեղծումը ևս կարևոր պայման է ՀՀ ապագա հզորացման համար:

Ապագա հզոր և միացյալ Հայաստանի կերտման համար կարևոր է արդիական ռազմական գիտության զարգացումը, առանց որի հույժ դժվար, եթե չասենք անհնար է թե՛ ռազմական հզոր ուժերի, թե՛ ռազմական արդյունաբերության և թե՛ հզոր, կարգապահ, մարտունակ ու միասնական հայ ազգի կերտումը: Իսկ ռազմական գիտության և միաժամանակ պատմագիտության մի խիստ կարևոր մասն էլ կազմում է ռազմարվեստի պատմությունը: Այդ գիտությունը ՀՀ-ում ըստ էության դեռ գոյություն չունի[1]: Այն պետք է ստեղծվի գրեթե զրոյից, չխնայելով որևէ ջանք, քանզի ունի թե՛ զուտ կիրառական ռազմական, թե՛ ապագայագիտական նշանակություն: Նպատակադրումներից մեկը՝ համաշխարհային ռազմարվեստի մանրակրկիտ ուսումնասիրությունը և ռազմարվեստի զարգացման ապագա միտումների պարզումը ավելի վաղ, քան դա կանեն այլ երկրներում: Հայը պետք է ջանա գերազանցել մյուս ազգերին հատկապես գիտությամբ, այդ թվում նաև ռազմագիտությամբ ու նրա մասը կազմող ռազմարվեստով: Միայն այս կերպ է հնարավոր կերտել ուժեղ ազգի ապագան: Ահա այդտեղից է բխում ռազմարվեստի պատմագիտության հայկական դպրոցի ստեղծման կարևորությունը:

Հատուցման հասնելու համար հարկավոր են հսկայական ջանքեր և հսկայական զոհողություններ: Սակայն այլ կերպ հնարավոր չէ հասնել պատմական Հայրենիքի ազատագրմանը և ազգային իղձերի իրականացմանը: Հայ ազգը մեծագործությունների գնալու կամք դրսևորելու դեպքում ընդունակ է հոգեփոխվելու: Դիմենք Նժդեհյան իմաստությանը. «Ժողովուրդները իրենց նպատակի հետ փոխում են իրենց էութիւնը՝ Հայը պիտի դառնար այն, ինչ որ է այսօր - տէ՛ր ինքնանուաճ Հայրենիքի...»[2] «Արժանի չես հայրենիքիդ, եթէ այն չես դաւանում իբրև գերագոյն նպատակ, իսկ անձդ՝ իբրև միջոց[3]»: Մեջբերենք Նժդեհի նաև հետևյալ միտքը. «Այսպէս ապրեց Հրէութիւնը, մինչև որ մի օր էլ իր իշխանութիւնը կը տարածէր աշխարհի մեծ մասի վրայ: Նա յաղթեց, որովհետև նրա մօտ գերագոյն հակակշիռը պատկանում է ազգին, որը ներկայացնում և արտայայտնում է իր ընտրանիի միջոցաւ: Նա յաղթեց, որովհետև նրա մէջ պարտականութիւն է անհատական երջանկութեան ձգտիլը, սակայն, յօգուտ Իսրայէլի բարօրութեան. գովելի է փառասիրութիւնը, բայց Իսրայէլի փառքի համար. արդար է հարստանալու տենչը, հարստութիւնը, բայց դա ո՛չ թէ որպէս նպատակ, այլ որպէս միջոց՝ զայն Իսրայէլի դատին ու ազդեցութեան ծառայեցնելու համար: Եւ հենց այդ է պատճառը, որ հրէութիւնը այսօր տէր է մի անպարտելի ոյժի - ոսկու և խելքի եղբայրութեան - իր ծոցի մէջ: Այսպիսով, միայն նա յաջողեց իր մեծագոյն դժբախտութիւնը, իր արմատական տարտղնումը - կարծէք ալքիմիաբար վերածել մեծ օրհնութեան իր համար: Այսօր նա տէր է մի այնպիսի հզօրութեան - ոսկի,

[1] Սույն հոդվածի հեղինակի կողմից պատրաստվել և ԵՊՀ պատմության ֆակուլտետի ղեկավարության քննարկմանն է ներկայացվել «Ռազմարվեստի պատմություն» դասընթացի ծրագրի նախագիծը: Բացի այդ, պատրաստվել են «Պատերազմների պատմություն» և «Ռազմարվեստի տեսություն» դասընթացների ծրագրերի նախագծերը:

[2] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2006, էջ 173:

[3] Նույնը, էջ 347:

հեղինակութիւն, ոյժ - որը նրա համար երազ պիտի մնար անգամ Տիտոսէն կործանուած անկախ Հրէաստանի մէջ: Գաղտնիքը գիտէ՞ք: Իր աննուազ պաշտամունքը դէպի Սիոնը, որով և որի համար ապրեց Աբրահամի ցեղը: Իր բոցեղէն հայրենաբաղձութիւնը, որը ո՛չ թէ միայն հայրենազուրկ Հրեան Հրեայ պահեց, այլև զայն դարձուց մարդկութեան ամենահարուստ, ամենաիմաստուն և ամենայեղափոխական մասը»[1]:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և հայության առջև ծառացող խնդիրները՝ հայ ազգը՝ հայաստանաբնակ, թե աշխարհասփյուռ, պետք է վերածվի բանակ-ազգի, գերկազմակերպված ու ռազմականացված միասնական օրգանիզմի, առանց որի անհնար է թե՛ մեր հետագա գոյատևումը և գլոբալ ու տարածաշրջանային մարտահրավերներին և համազգային անվտանգության սպառնալիքներին դիմագրավելը, թե՛ ներկա ու ապագա ազգային խնդիրների լուծումը:

Мнацакан Хачатрян, Возмещение за Геноцид армян (Военно-политический аспект), - В статье обсуждается вопрос возмещения за Геноцид армян с военно-политической точки зрения. Предлагается разработать соответсвтующие сценарии для решения возникающих проблем.

Mnatsakan Khachatryan, Reparations for the Armenian Genocide (The Military-Political Aspect), - The article discusses the issue of reparations for the Armenian Genocide from the military-political point of view. The developing of adequate scenarios for the rising problems is proposed.

Մնացական Խաչատրյան - «Ազգ» շաբաթաթերթի ռազմական վերլուծաբան, ռազմական պատմաբան:

[1] Նույնը, էջ 468: